Արձանագրություն N 2

ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-20/14 ծածկագրով մոդուլային տիպի, պողպատե կոնստրուկտիվ համակարգով սպանդանոցների շենքերի կառուցման (բազմակի կիրառման) օրինակելի նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների ձեռքբերման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 11.06.2020թ.
ժամը 14:30

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Միրզոյան

Հանձնաժողովի անդամներ՝ Դ. Շատվերյան
Ռ. Եղիազարյան
Ար. Գրիգորյան
Գ. Խորենյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Ն. Հարությունյան

1. ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-20/14 ծածկագրով գնման ընթացակարգին հայտ ներկայացրած մասնակցի մասին

(Ա. Միրզոյան)

1.1 Ընդունել ի գիտություն, որ.

ա) Մինչև հրավերում փոփոխությունների կատարման համար սահմանված վերջնաժամկետը լրանալը, հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ չեն ներկայացվել:

բ) Գնման ընթացակարգի հայտը բացվել է www.armeps.am կայքի միջոցով 2020 թվականի հունիսի 10-ին ժամը 11:30-ին:

գ) Գնման առարկայի նախահաշվային արժեքը կազմում է 11 880 000 (տասնմեկ միլիոն ութ հարյուր ութսուն հազար) ՀՀ դրամ:

դ) Գնման ընթացակարգին հայտ է ներկայացրել հետևյալ կազմակերպությունը

ՀՀ դրամ

Հ/Հ	Մասնակցի անվանումը	Ինքնարժեք	Շահույթ	ԱԱՀ	Ընդհանուր գինը
1	<<Նորաշեն>> ՆՏ ԱԿ	8 000 000	1 000 000	1 800 000	10 800 000

ե) Գնման ընթացակարգի մասնակցի՝ <<Նորաշեն>> ՆՏ ԱԿ-ի (այսուհետ՝ Մասնակից) հայտով ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ ներկայացված հայտի ապահովումը չի համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին:

1.2 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ին N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի (այսուհետ՝ Կարգ) 41-րդ կետի պահանջները՝ գնահատող հանձնաժողովը կասեցրել է 2020 թվականի հունիսի 10-ի նիստը և ծանուցել Մասնակցին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել նշված անհամապատասխանությունը, որն էլ սահմանված ժամկետում շտկվել է:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ - 0:

2. ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-20/14 ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակցի մասին

(Ա. Միրզոյան)

2.1 Հիմք ընդունելով Մասնակցի կողմից հայտով ներկայացված փաստաթղթերը և գնահատող հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ գնահատող հանձնաժողովի կողմից հայտը գնահատվել է <<բավարար>>:

2.2 Հիմք ընդունելով Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետը՝ գնահատող հանձնաժողովը որոշեց ընտրված մասնակից ճանաչել <<Նորաշեն>> ՆՏ ԱԿ-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ - 0:

3. Պետական գնման պայմանագիր կնքելու որոշում ընդունելու մասին

(Ա. Միրզոյան)

3.1 Հիմք ընդունելով սույն արձանագրության 2.2 կետով ընդունված որոշումը, ինչպես նաև Օրենքի 36-րդ հոդվածի 1-ին կետը՝ գնահատող հանձնաժողովը որոշեց պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել <<Նորաշեն>> ՆՏ ԱԿ-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ – 0:

4. ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-20/14 ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը և վայրը հաստատելու մասին

(Ա. Միրզոյան)

4.1 Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել պետական գնման պայմանագիր կնքելու օրը ՀՀ քաղաքաշինության կոմիտեում, ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3, IV հարկ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ - 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------- Ա. Միրզոյան

Անդամ՝ ---------- Դ. Շատվերյան

---------- Ռ. Եղիազարյան

---------- Ար. Գրիգորյան

---------- Գ. Խորենյան

Արձանագրությունը կազմեց
հանձնաժողովի քարտուղար՝ ---------- Ն. Հարությունյան